# Պերլինի Հայ Համայնք
## Armenische Gemeinde zu Berlin
**Gemeinnütziger Verein • gegr. 1923**


*Բեռլին, մայիս 2011*

*Սիրելի հայրենակիցներ, սիրելի անդամներ, սիրելի բարեկամներ,*

*Սիրով հրաւիրում ենք Ձեզ մասնակցելու մեր ամառային միջոցառումներին:*

***25 յունիս 2011***
*ժամը 17–ին*
*Հայ Տան մէջ*

*Խորոված*
*Հաճելի երեկոյ Հայ Տան պարտէզում*
*Ուտելիքը կվաճառուի Հայ Տան մէջ*

***31 յուլիս 2011***
*կիրակի, ժամը 13–ին*
*Հայ Տան մէջ*

*Վարդավառ*
*Այս տարի եւս տօնում ենք այս հին տօնը Հայ Տան պարտէզում՝ յուսալով, որ եղանակը կլինի արեւոտ ու ջերմ ու արեգակը կարճ ժամանակամիջոցում կչորացնի Ձեր թաց հագուստները: Սեղանը կպատրաստենք բոլորս միասին մեր բերած համեղ ճաշատեսակներով:*

***14 օգոստոս 2011***
*կիրակի, ժամը 16–ին*
*Հայ Տան մէջ*

*Ս. Աստուածածին*
*Խաղողօրհնէքի այս գեղեցիկ տօնի առիթով հանդիպում Հայ Տան մէջ: Սեղանը կզարդարի խաղողով, գինիով, պանիրով և այլ ճաշատեսակներով:*

***4 սեպտեմբեր 2011***
*կիրակի, ժամը 15–ին*
*Հայ Տան մէջ*

*Խորոված յետ արձակուրդի*
*Յուսալով, որ լաւ հանգստացած կլինեք արձակուրդներին հանդիպում խորոված ուտելու և զւարճանալու:*
*Ուտելիքը կվաճառուի Հայ Տան մէջ*

*Ցանկանում ենք բոլորին հաճելի և ուրախ ամառային արձակուրդ:*

*Յարգանքներով՝*
*Վարչութիւն*


Postfach 12 02 38 • 10 592 Berlin
Gemeindehaus Hay Dun: Sophie-Charlotten-Strasse 113a, 14 059 Berlin
Tel: 030/341 39 65, Fax: 030/348 24 12, e-mail: armenische-gemeinde-zu-berlin@web.de
Berliner Commerzbank: Konto Nr. 7151 392 00, BLZ 100 400 00
Postbank Berlin: Konto Nr. 343 65 100, BLZ 100 100 10